## Արագ փաստեր

- Ուղղված է տվյալների հավաքագրման բացի նվազեցմանը:
- Անօդաչու թռչող սարքի նորարարական կիրառություն:
- Օգտագործում է մասնակցային crowdsourcing տեխնոլոգիա:
- Գտնվում է Երևան, գործում Հայաստանի ողջ տարածքում:




**www.ushadir.am**

**Ահազանգման հարթակը մշակման ընթացքում է: Խնդրում ենք փորձարկել:**

GET IT ON Google Play



airesvalley

# AirAid:

## Օդային դիտարկման և բնապահպանական մասնակցային քարտեզագրման հարթակի ստեղծում (Փուլ 1)

www.airesvalley.com
www.usadir.am
info@airesvalley.com

«Այրես զարգացման» հիմնադրամ
Երևան, 2017

GLOBAL ENVIRONMENT FACILITY gef INVESTING IN OUR PLANET

SGP The GEF Small Grants Programme 25 YEARS

UNDP

Empowered lives.
Resilient nations.

## Նախագիծ

Նախագծի նպատակն է բարելավել շրջակա միջավայրի կառավարումը բնապահպանության և բնական ռեսուրսների կառավարման մեջ ներգրավված քաղաքացիական հասարակության և կառավարության կարողությունների ընդլայնման միջոցով:

Մասնավորապես, «ԱյրԷյդ» հարթակի ներմուծմամբ և կիրառմամբ, որը կհանդիսանա կառավարության և քաղաքացիական հասարակության միջև համընդհանուր նշանակության խնդիրների փոխանցման կապուղի:

«ԱյրԷյդ» հարթակը ուղղված տվյալների հավաքագրման, մշակման և հետագա հասանելիության հիմնախնդրի լուծմանը.

- Անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) միջոցով հեռակա դիտարկումների և երկրի հետազոտությունների, պատկերների ստացման, մշակման և վերլուծության ունակությունների զարգացմանը
- Տվյալների փոխանցման և հասանելիության նպատակով Ուշահիդի հարակի վրա հենված հանրային մասնակցությամբ ահազանգման և տվյալների մշակման համակարգչային և շարժական հարթակի ստեղծմանը.



## Ակնկալվող արդյունքներ

Գլխավոր արդյունքը՝ նորարարական և մասնակցային տեխնոլոգիաների կիրառման միջոցով զարգացնել բնապահպանական մոնիտորինգի, ահազանգման և տվյալների վիզուալիզացիայի կարողությունները, մասնավորապես՝

- Հիմնել գործող, ըստ պահանջի ԱԹՍ մոնիտորինգի կարողություն. պատկերների ստացման, թռիչքների պլանավորման և իրականացնամ կարողությունների առկայություն,
- Ստեղծել առցանց համակարգչային և շարժական հավելված՝ տվյալների մասնակցային հավաքագրման, մշակման, վիզուալիզացիայի և մոնիտորինգի ունակությամբ,
- Շահառու կազմակերպությունների մասնագետների՝ հեռահար դիտարկման և մշակման մեթոդների և հնարավորությունների վերաբերյալ ունակությունների զարգացում:




## Մեր մասին

Ծրագիրը իրագործվում է «Այրես զարգացման» հիմնադրամի կողմից, որը հիմնադրվել է ավիացիայի, վերականգնվող էներգիայի և կրթության սիրահարների կողմից: Հիմնադրամի գործունեությունը կենտրոնանում է այնպիսի ոլորտների զարգացման վրա, ինչպիսինն են ավիացիան, շրջակա միջավայրի պահպանությունը, տրանսպորտը, ՏԿՏ, հումանիտար աջակցությունը:

Հիմնադրամը՝

- Թիրախում է երևակայություն ունեցող և լուծումներին ուղղված երիտասարդ տաղանդը,
- Խթանում է Հայաստանում վերականգնվող էներգիայի տարածման ապրանքների և ծառայությունների նորարարությունը:
- Խրախուսում է պետական հաստատությունների, մասնավոր հատվածի, հասարակական, կրթական և հետազոտական կազմակեպությունների միջև համագործակցության հնարավորությունները:

